ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ «ԱԼ-ԹԱԿԱԴԴՈՒՄ» ԹԵՐԹՈՒՄ (1912-1914 ԹԹ.)

ԵՍՈՅԱՆ Մ. Ա.

XX դարի սկզբին Հայկական հարցի հիմնական բաղադրիչներից մեկը Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խնդիրն էր: Սիրիական «Ալ-Թակադդում» թերթն[1] իր համարներում պարբերաբար անդրադարձել է Օսմանյան կայսրությունում հայկական բարենորոգումների խնդրին, հատկապես բարենորոգումների հետ կապված տարբեր ծրագրերի, Պողոս Նուբար փաշայի գործունեությանը և այլ հարցերի լուսաբանմանը:

Հայկական բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ առաջին՝ «Արևելյան Անատոլիայի վիլայեթները» վերնագրով հոդվածում խոսվում է Արևելյան Անատոլիայի վիլայեթներում տիրող սոցիալ-քաղաքական ծանր իրավիճակի մասին: Այնուհետև հոդվածագիրը տեղեկացնում է, որ հայազգի երկու պատգամավորները նամակ են ուղարկել կառավարություն: Այն ներառում էր բարենորոգումների իրականացման համար անհրաժեշտ տասը կետ, որոնք պետք է իրականացվեին Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սեբաստիայի և Խարբերդի վիլայեթներում: Այդ նպատակով կառավարությունը ստեղծել էր հանձնաժողով՝ կազմված պաշտպանության, ներքին գործերի, արդարադատության, գյուղատնտեսության նախարարներից՝ քննարկելու հայ պատգամավորների պահանջը բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ: «Հանձնաժողովը երկարատև ուսումնասիրությունից հետո հավանություն տվեց բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ներկայացված ութ կետերին, իսկ մնացած երկու կետի վերաբերյալ որոշվեց քննարկումը թողնել հարմար ժամանակի»[2],- հաղորդում է հոդվածագիրը:

1912-1913 թթ. Օսմանյան Թուրքիայում բարենորոգումների իրականացումն օրակարգի հարց էր դարձել եվրոպական մասում տիրույթները կորցնելու պատճառով: Այս խնդրի լուսաբանման մասին է «Ալ-Թակադդում»-ի՝

---

[1] *«Ալ-Թակադդում»-ը XX դարի սկզբին Հալեպում տպագրվող ամենահայտնի թերթերից էր: Հրատարակվել է 1908 թ. օգոստոսից՝ որպես քաղաքական շաբաթաթերթ: Գլխավոր խմբագիրը Շուքրի Քանիդրն էր: Թերթը մինչև 7-րդ համարի հրապարակումը կոչվել է «Ալ-Հաուադիս ալ-Դախիլիա» (ներքին իրադարձություններ), քանի որ հրապարակվում էին պետության ներքին գործերին վերաբերող տեղեկություններ: Արդեն 8-րդ համարից՝ 1908 թ. հոկտեմբերի 15-ից, անվանվել է «Ալ-Թակադդում»: Այն գովերգում էր ազատությունը, քննադատում բռնապետությունը, անօրինականությունը: Լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ՝ երեքշաբթի և ուրբաթ, իսկ 1913-ից՝ շաբաթական երեք անգամ: Այսպես շարունակվեց մինչև 1914 թ. կեսերը՝ Առաջին աշխարհամարտի սկիզբը, որից հետո փակվեց և վերաբացվեց միայն 1919 թ. հունվարի 16-ին: Տպագրվել է մինչև 1940-ական թթ.: Նյութերում կարևոր տեղ էին զբաղեցնում Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների, ներառյալ՝ հայերի մասին հիշատակումները:*

[2] *Ալ-Թակադդում, Հալեպ, 1912, N 262:*

«Հետաձգման քաղաքականությունը» վերնագրով հոդվածը. խոսվում է նշված ժամանակահատվածում Օսմանյան կայսրությունում բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ երկու տեսակետի մասին: Առաջին տեսակետի կողմնակիցների կարծիքով Օսմանյան կայսրությունը վերջին տարիներին ոչ մի առաջընթաց չի ապրել, ուստի անհրաժեշտ էր անհապաղ բարենորոգումներ անցկացնել կայսրության վիլայեթներում: Մյուս տեսակետի կողմնակիցները հանդես էին գալիս գործող վիճակի պահպանման օգտին: «Դժբախտաբար Օսմանյան կայսրությունում գերակայում էին երկրորդ տեսակետի կողմնակիցները: Եթե կառավարությունը ժամանակին բարենորոգումներ անցկացներ, երկիրը այդքան վնաս չէր կրի: Ուստի անհրաժեշտ է բարենորոգումների իրականացումը, քանի որ միայն այս ճանապարհով կարելի է դուրս գալ այս վիճակից»[3],- եզրակացնում է թերթը:

Հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու հարցում Թուրքիայի ու Եվրոպայի խոշոր տերությունների դիրքորոշման լուսաբանմանն է ուղղված «Ալ-Թակադդում»-ի՝ 1913 թ. հունվարին հրատարակված հոդվածը: Ըստ այդմ՝ Թուրքիան Եվրոպայում իր տիրույթները կորցնելուց հետո պետք է ամեն ինչ աներ Ասիայում իր տիրույթները փրկելու համար, և դա պետք է կատարվեր միայն երկրի ներսում բարենորոգումներ անցկացնելու ճանապարհով: Ֆրանսիայի դիրքորոշման կապակցությամբ հոդվածում նշվում է, որ վերջինս հանդես էր գալիս Լիբանանի, ինչպես նաև Հայաստանի պաշտպանի դիրքում՝ պահանջելով բարենորոգումներ անցկացնել վերոնշյալ երկրներում: Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա հեղինակը դժվարանում էր գնահատական տալ նրա քաղաքականությանը Հայաստանում՝ արդյոք հայերի՞ կողմից է, թե՞ ոչ: «Ինչևէ, ամեն դեպքում օսմանյան կառավարությունը պետք է արագացնի Հայաստանում բարենորոգումների անցկացումը, քանի որ հակառակ պարագայում վախ կա, որ Ռուսաստանը կարող է հարձակվել Անատոլիայի վրա: Իսկ ինչ վերաբերում է Ավստրիային, ապա վերջինս կանգնած է Թուրքիայի կողքին և կողմ է, որ բարենորոգումներ անցկացվեն կայսրության ողջ տարածքնում»[4],- եզրակացնում է թերթը: Իսկ մեկ այլ՝ «Բուլղարիան պաշտպանում է հայերին» վերնագրով հոդվածում ներկայացված է Բուլղարիայի «Ազատություն» կուսակցության ղեկավարներից մեկի՝ Բուլղարիայի Ազգային ժողովի նախագահ պարոն Դանիֆի հոդվածները Հայկական հարցի մասին: «Մենք պետք է պաշտպանենք հայերին և պահանջենք մեծ տերություններից Բեռլինի վեհաժողովում որոշված բարենորոգումներ իրականացնել»[5],- ասում է պարոն Դանիֆը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ նշված ժամանակահատվածում բոլոր մեծ տերությունները, ինչպես նաև Թուրքիան գիտակցում էին անհապաղ բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունը:

---

[3] Նույն տեղում, 1913, N 361:

[4] Նույն տեղում:

[5] Նույն տեղում, N 360:

«Ալ-Թակադդում» թերթն Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ հոդվածներում առանձնահատուկ տեղ է հատկացնում այս առնչությամբ տարբեր ծրագրերի լուսաբանմանը: Մասնավորապես, «Անատոլիայի բարենորոգումները» վերնագրով հոդվածում տեղեկացվում է, որ Պողոս Նուբար փաշան Բալկաններում պատերազմ սկսվելուց հետո մեկնում է Եվրոպա՝ ջանքեր գործադրելու հայկական բարենորոգումների անցկացման շուրջ: Այդ նույն ժամանակ Բ. Դուռը առաջարկեց բարենորոգումների նախագիծ, ըստ որի՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի վիլայեթներից կազմվելու էր մեկ ընդհանուր նահանգ՝ օսմանցի նահանգապետի ղեկավարությամբ[6]: Նրան օգնելու էր եվրոպացի խորհրդականը: Կազմվելու էր նաև նահանգային խորհուրդ նահանգապետի գլխավորությամբ՝ բաղկացած վեց անդամներից՝ երեք մուսուլման, երկու հայ և մեկ քուրդ: «Սակայն այս ծրագիրը ուշադրության չարժանացավ, և շուտով կազմվեց նոր հանձնաժողով ներքին գործերի նախարար Հաջ Ադիլ Բիքի ղեկավարությամբ՝ կազմելու բարենորոգումների մեկ այլ նախագիծ: Այս հանձնաժողովը գտնում էր, որ բարենորոգումները կայսրության ողջ տարածքում պետք է իրականացվեն նույն մոդելով»[7],- հաղորդում է թերթը: Այս նույն ժամանակահատվածում Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանատան թարգման Ա. Մանդելշտամը ներկայացրեց բարենորոգումների մի նախագիծ, ըստ որի՝ բարենորոգումները պետք է անցկացվեին, վերոնշյալ վիլայեթներից բացի, նաև Էրզրումի և Սվասի վիլայեթներում: «Այն բանից հետո, երբ այս ծրագիրը հավանության չարժանացավ դաշնակից երկրների կողմից, հարցի լուծումը փոխանցվեց Ռուսաստանի և Գերմանիայի կառավարություններին: Վերջիններս ներկայացրեցին բարենորոգումների նոր ծրագիր, ըստ որի, վերոհիշյալ վեց վիլայեթները բաժանվում էին երկու նահանգների՝ օտարերկրացի ընդհանուր քննիչների ղեկավարությամբ»[8],- տեղեկացնում է հոդվածագիրը: Այս ծրագիրը ոչ պաշտոնական ձևով հաղորդվեց Բ. Դռանը 1913 թ. սեպտեմբերին, որը, սակայն, արժանացավ Բ. Դռան դժգոհությանը:

Այս հոդվածում իրադարձությունների հերթականության որոշակի խախտումներ են նկատվում, քանի որ Ա. Մանդելշտամը բարենորոգումների ռուսական ծրագիրը հունիսի սկզբներին ներկայացնում է մեծ տերությունների դեսպանատների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի քննարկմանը, որն այս խնդիրն ուսումնասիրելու համար 1913 թ. հունիսի 3-20-ն ընկած ժամանակահատվածում 8 նիստ գումարեց Կ. Պոլսի Ենի-Քյոյ վայրում գտնվող Ավստրիական դեսպանատանը[9], մինչդեռ թուրքական ծրագիրը հրապարակ է հանվում 1913 թ. հուլիսի 1-ին[10]: Բացի այդ՝ հոդվածում թուրքական

---

[6] Նույն տեղում, 1914, N 481:

[7] Նույն տեղում:

[8] Նույն տեղում:

[9] **Պողոսյան Ս.,** Պողոս Նուբար փաշա. Ազգային գործիչը, Ե., 2004, էջ 61:

[10] **Բոյաջյան Հ.,** Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ., Ե., 2010, էջ 111:

ծրագրի վերաբերյալ նշվում է, որ հայկական վիլայեթները պետք է կազմեն մեկ նահանգ՝ օսմանցի ընդհանուր քննիչի ղեկավարությամբ, սակայն, ինչպես հայտնի է, Թուրքիան ի սկզբանե դեմ է եղել հայկական վիլայեթներից բաղկացած մեկ նահանգ ստեղծվելուն:

«Ալ-Թակադդում»-ի 481-րդ համարում հրապարակված մեկ այլ հոդվածում տեղեկացվում է, որ օսմանյան քաղաքական շրջանակները բացահայտ հայտարարել են, որ Բ. Դուռը շատ է հետաքրքրված արևելյան վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու հարցում[11]: Թերթը նաև տեղեկացնում է, որ Բ. Դուռը արշավ էր սկսել Փարիզում գտնվող հայկական Ազգային պատվիրակության ուղղությամբ, որպեսզի վերջինս հրաժարվի դիմել մեծ տերություններին՝ հավաստիացնելով, որ Բ. Դուռը ամեն ինչ կանի Արևելյան Անատոլիայի վիլայեթներում վարչական իշխանությունը բարելավելու ուղղությամբ: Բ. Դուռը նույնիսկ հայկական Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարին հրավիրել է Կ. Պոլիս այս նպատակով[12]:

Իրականում Թուրքիան չէր ցանկանում հայկական վիլայեթնեում բարենորոգումներ իրականացնել, և հենց սկզբից Պողոս Նուբարի առաքելությանը խոչընդոտելու համար Բ. Դուռը ցանկանում էր Պողոս Նուբարի հետ անմիջական բանակցությունների մեջ մտնել և բազմիցս նրան հրավիրել է Կ. Պոլիս[13], սակայն Պողոս Նուբարը հրաժարվել է մեկնել[14]:

Թուրքական կառավարության՝ բարենորոգումներ անցկացնելու հարցում դիմադրության հիմնական թիրախը տերությունների կողմից ընդհանուր քննիչների թեկնածուների առաջադրման պահանջն էր, որի գործադրմամբ, ըստ նրա, սկիզբ կդրվեր Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթների բաժանմանը: Այս խնդրի մերկացմանն է ուղղված «Ալ-Թակադդում»-ի «Օսմանյան գործերը» վերնագրով հոդվածը, որում ներկայացված է Կ. Պոլսում «Դեյլի թելեգրաֆ» թերթի թղթակից Քուանար Ուստրուի՝ թերթին ուղարկված թղթակցությունը: Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու կապակցությամբ «Դեյլի թելեգրաֆ» թերթի թղթա- կիցը նշում է, որ Բ. Դուռը համառորեն հրաժարվում էր եվրոպա- ցիների վերահսկողությունից[15]: Հոդվածում հատուկ հետաքրքրու-թյուն էր ցուցաբերվում նաև հողերի վերադարձման խնդրին, որոնք խլվել էին օտար երկրներում ապաստան գտած հայերի ձեռքից[16]:

Հայկական բարենորոգումների վերաբերյալ հաջորդ՝ «Անատոլիայում բարենորոգումների հարցի ավարտը» վերնագրով հոդվածում անդրադարձ

---

[11] Ալ-Թակադդում, N 481:

[12] Նույն տեղում:

[13] Յուսաբեր, Կահիրէ, 1913, N 166:

[14] **Օտեան Ե.,** Պողոս Նուպար փաշա (կենսագրական նիւթեր), Կ. Պոլիս, 1913, էջ 74: **Պողոսյան Ս.,** նշվ. աշխ., էջ 44:

[15] Ալ-Թակադդում, N 481:

[16] Նույն տեղում:

է կատարվում 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրի լուսաբանմանը[17]: Նյութի սկզբում դրվատանքով խոսվում է Պողոս Նուբար անձի մասին, այնուհետև հոդվածագիրը տեղեկացնում է, որ Բ. Դուռն արդեն որոշել է ներկայացնել բարենորոգումների նախագիծ: «Համաձայնագրի «հապճեպ» ստորագրման պատճառներից էին հայ կաթողիկոսի՝ համաձայնագրի նկատմամբ հակվածությունը և ռուսական դեսպանատան ձգձգումներից հրաժարվելը»[18],- նշում է թերթը: Հոդվածում նշվում է, որ հունվարի 26-ի համաձայնագրի ստորագրման պատճառներն էին հայ կաթողիկոսի հակվածությունը և Ռուսաստանի շահագրգռվածությունը: Պետք է նշել, որ համաձայնագրի ստորագրման հարցում կային նաև այլ բարենպաստ պայմաններ[19]:

Համարներում անդրադարձել են նաև Պողոս Նուբարի՝ տարբեր թերթերին տված հարցազրույցների լուսաբանմանը[20]:

Բարենորոգումների հետ կապված վերջին՝ «Արևելյան վիլայեթների բարենորոգումները» վերնագրով հոդվածում հաղորդվում է, որ արևելյան վիլայեթների բարենորոգումները մտել են գործնական փուլ: «Հայերը չեն ցանկանում Օսմանյան կայսրության մասնատումը»[21],- եզրակացնում է թերթը: Այնուհետև նշվում էր, որ Ֆրանսիան հայաբնակ վիլայեթներում շատ առանձնաշնորհումներ ուներ, ուստի ցանկանում էր, որ օսմանյան պետությունը զարգանա, և ամեն ինչ անում էր բարենորոգումների իրականացումը հեշտացնելու համար:

Չնայած Պողոս Նուբար փաշայի եռանդուն գործունեությանը՝ այս անգամ ևս հայկական բարենորոգումների իրականացումը մնաց միայն թղթի վրա:

ОСВЕЩЕНИЕ АРМЯНСКИХ РЕФОРМ СИРИЙСКОЙ ГАЗЕТОЙ “АЛ-ТАКАДДУМ” (1912-1914 ГГ.)

ЕСОЯН М. А.

Резюме

С приходом к власти младотурок в Османской империи армяне по-прежнему подвергались гонениям. Воспользовавшись поражением Турции в Первой Балканской войне 1912 г., армяне попытались напомнить великим державам о претворении в жизнь пунктов 61-ой статьи Берлинского конгресса. Эти события были освещены в нескольких номерах сирийской газеты “Ал-Такаддум”. Сложившаяся геополитическая обстановка, противо-

---

[17] **Պողոսյան Ս.,** *նշվ. աշխ., էջ 77-78:*

[18] *Ալ-Թակադդում, 1914, N 498:*

[19] *Մանրամասն տե՛ս* **Բոյաջյան Հ.,** *նշվ. աշխ., էջ 155-160:*

[20] *Մանրամասն տե՛ս Ալ-Թակադդում, 1914, N 475:*

[21] *Նույն տեղում, N 503:*

речия между великими державами, а также политика турок окончательно сорвали осуществление реформ в Западной Армении.

ON THE IMPLEMENTATION OF REFORMS IN ARMENIA IN SYRIAN "AL-TAKADDUM" NEWSPAPER (1912-1914)

M. ESOYAN

Abstract

In 1908, after the abolition of Abdul-Hamidian despotic regime and with the arrival of Young Turks, the pursuits and cruelties against Western Armenians did not cease. The latter were forced to seek ways to improve their state. The Western Armenians tried to harvest benefit from Turkey's defeat in the first Balkan war and remind the states of their obligations confirmed by the 61st article of Berlin convention.

The reforms in Western Armenia were covered by Syrian "Al-Takaddum" newspaper. The geopolitical conditions of the time and the policy adopted by Turkish government hindered the implementation of reforms in Western Armenia.